



2. Ս. ԱՆԱՍՅԱՆ

ՄԻ ԱՆԾԱՆՈՐ ՀԵՂԻՆԱԿ ԵՎ ՆՐԱ ԵՐԿԻ ՆՈՐԱԳՅՈՒՏ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԹՈՎՄԱՍ ԱԳՈՒԵՑԻ

(XVII—XVIII դար)

(Շարունակություն և վերջ)



միջի ալոց, այս առթիվ հետաքրքրական են այն տեղեկությունները, որ Հ. Մ. Ավերյանը տալիս է մեզ իր «Լիա-

կատար վարք և վկայաբանություն սրբոց» հատորավոր աշխատության մեջ, թովմաս առաքյալին վերաբերող հիշյալ բնագրերի ծագման մասին:

«Ի բազմապատիկ բանից անտի վարդապետաց և հին մատենագրաց և վկայաբանից կամ ճառընտրաց յայտնապէս ունիմք իմանալ, թէ կրկին էին ստալոդ պատմութիւնք ի վերայ սրբոցն թովմայի ի վաղուց ի վեր երեւելալ: Առաջինն էր գործ աղանդաւորաց Մանիքեցոց՝ լի ոչմիայն ստապատում կեղծեօք, այլև յայտնի մոլորութեամբք և հայհոյութեամբք ընդդէմ ճշմարտութեան ուղղափառ դաւանութեան: Եւ երկրորդն էր գործ զտեալ ի ձեռն ուղղափառաց՝ թօթափամբք ի մոլար վարդապետութեանց, բայց պահեալ ըստ պատմական մասին՝ նոյնպիսի անհեթեթ և երազապատում բանիք: Արդ՝ որպէս առաջինն էր դատապարտելի, նորոպա և երկրորդն անընդունելի դասեալ ընդ երկբայական գիրս, որ ծածուկք կամ անյայտք կոչին. և սա է՝ որ գտանի ըստ մասին փոխանցեալ առ զանազան պատմիչն այլևայլ

ազգաց, որպէս և ի ճառընտիրս մեր. յորոց ինչ ինչ կամեցաք առնուլ յայսմ մասին»¹⁾:

Եվ այսպես՝ Ավերյանն ինքը, ուրիշների շարքին, այս աղբյուրից էլ է օգտվել ըստ վեներաբիլյան Ա ճառընտրի, թովմաս առաքյալի վարքը կազմելիս²⁾:

Հին և նոր կտակարանների «անկանոն» կամ «անվավեր» կոչվող գրքերը, որոնց շարքին են պատկանում և մեր բնագրերը, միջին դարերում թարգմանություններով տարածված էին քրիստոնեական բոլոր երկրներում, և այսօր բանասիրությունը առանձին ուշադրություն է նվիրում նրանց հավաքմանն ու քննական հրատարակությանը, որովհետև նրանց ազդեցությունը մեծ է եղել ոչ թե միայն հայկական գրականության վրա, այլ նաև միջնադարյան և նոր ժամանակների քրիստոնեական բոլոր գրականությունների: Եվ թովմաս առաքյալի անվավերականն էլ թարգմանված է եղել ինչպես հայերեն, այնպես նաև այլ լեզուներով:

Գալով մատների փոխադրության պատմությանը, որին թովմաս Ագոպեցին նվիրել է 5 տուն, կարծում ենք, որ դա վերցված կլինի

1) Հ. Մ. Ավերյան, «Լիափատար վարք և վկայաբանություն սրբոց» որը կան ի հին Տօնացուցի Եկեղեցւոյ Հայաստանեայց», հտ. Ե. (Վենետիկ, 1813), էջ 273:

2) Անդ, էջ 252—266:

անգիր աղբյուրից, ավանդությունից: Հարկ ենք համարում իր հետաքրքրության համար ամբողջությամբ առաջ բերել այդ մասը.

«Իսկ յետոյ սուրբ նըշխարքն այն լեալ. Կամալ իւր մասըն բաժանեալ. Այդոյ մատունքն արեամբ ներկեալ. Ինի ի վանք Գողթնեաց եկեալ:

«Բընակեւոցն յերկրին Գողթնեաց. Այր մի եկեալ յերկրէն Մարաց. Մանօթ երկրին Ըղըշտունեաց. Նւ սրբոյն Թօմայի վանաց:

«Հայցմամբ էառ սուրբ նըշխարաց. Զմատունսն արեամբ տանըն ներկած. Բերեալ յերկիրըս մեր Գողթնեաց. Եդ ի սուրբ վանքս յԱղուկեաց:

«Արծաթապատ սուրբ աջ շինած. Ականակուռ ոսկէզօծած. Սքանչեւագործ և հրաշապարծ. Ի գահոյն Թօմայի բազմած:

«Առ մեզ բազում հրաշքս ցուցած. Հոլով հրաշից եղաք տեսած. Միշտ բարեխօս ամուր կանգնած. Վասըն ազգիս հայկազունեաց:

(Էջ 53—54):

Նկատելի է, որ Թովմաս Աղուկեցու աշխատության այս մասը շատ համառոտ է, մինչդեռ հենց այս մասն է, որ անմիջապես վերաբերում է Աղուկսի վանքին և թվում է, թե պետք է լինե՞ր ավելի մանրամասն, քան մյուս մասերը: Այս, մեր կարծիքով, հետևիվանք է այն բանի, որ հեղինակը, իսկապես, գրավոր աղբյուր չի ունեցել և օգտվել է մի անորոշ ավանդությունից, Բարթողիմեոսի՝ Թովմասի խնդրանքով Հայաստան գալու մասին¹⁾: Բարթողիմյան վկայաբանության այդ կետը դարձապես էր ժողովրդական ավանդության մեջ: Ըստ այդ ավանդության, Բարթողիմեոսը գալիս է Աղուկիս, քարոզում է այն-

տեղ, վանք շինում Թովմասի անունով և այլն՝ առանց սակայն մասունքի զրույցի: Այս ավանդության ոտանավոր մշակումը անծանոթ մեկի կողմից, որպես հարակից նյութ, գրքում զետեղված է Աղուկեցու ոտանավոր պատմությունից անմիջապես հետո¹⁾, Իսկ մասունքի փոխադրության զրույցը իր կարգին պետք է ծագած և զարգացած լինի Բարթողիմյան այդ ավանդությունից²⁾: Մասունքի այս բանավոր ավանդությունից XVIII դարի սկզբին օգտվել է Թովմաս Աղուկեցին իր քերթվածի վերջին դրվագը հորինելու համար:

Թովմաս Աղուկեցու թեման արժանի է ուշադրության նաև սոցիալական տեսակետից: Վեպի հերոսի սոցիալական դիմագիծը պարզ է. նա աշխատավոր դասակարգերի ծնունդ է, «ճարտար քարկոփ և հիւան» (էջ 17). և ինչքան էլ վեպը իր հղացումով և ամբողջ կառուցումով կրոնական մտապատկերի մի հագեցված արտադրություն լինի, այնուամենայնիվ, հերոսի այդ դիմագիծը որոշակի պահված է անտեղ: Նա բացահայտորեն ներկայացվում է որպես աշխատավորության շահերին նվիրված մի անձնավորություն: Օրինակ՝ երբ Գնդափառ թագավորը ժամանակավորապես ուրիշ տեղ է մեկնում, Թովմասին հանձնելով տաճար կառուցելու սոսոք՝ վստահելով նրան նաև իր դանձեռն տնօրինումը, Թովմասը օգտվում է առիթից և այդ դանձեռն բաժանում աղքատներին ու տրանակներին.

«Իսկ Թովմաս զտուն գանձին բացեալ. Տայր աղքատաց ողորմեցեալ.

Որչափ կայր կարօտ և քաղցեալ.

Մըխիթարէր առատացեալ:

1) «Ի քան և եօթն ամիս թագաւորութեանն Սատրիոյ, եմուս սուրբ առաքելն Բարդղղոմէոս ի Հայս, աղաշնօք Թովմասի առաքելոյն, որ (Հեղեհատանից) գրեաց առ նա մինչ էր սուրբն Բարդղղոմէոս ի Խորասան», «Եւ անտի տնցեալ սուրբ առաքելն ի Գողթն գաւառ Հայոց, և ըստ հրամանաց Հոգւոյն սրբոյ եմուս ի վիճակ Թագէտի սուրբ առաքելոյն, որք ընկալան հաւատով զքարոզութիւն աւետարանին, և լուսաւորեցան ի նմանէ շնորհօք մկրտութեանն», տես՝ Զ. Ք. Զրաքյան, «Անվանոն գիրք առաքելականք», էջ 362, հմմտ. նաև էջ 351 և 352:

1) Այս «Յայլոյ ունեմնէ նուստս վարդապետէ» խորագրված ոտանավորը բաժանված է երեք գլուխների, հետևյալ վերնագրերով. ա. «Վասն գալստեան սրբոյ առաքելոյն Բարդղղոմէոսի ի յերկիրն Գողթնեաց, թղթովն Թովմասի առաքելոյն», բ. «Վասն գնալոյ սրբոյ առաքելոյն Բարդղղոմէոսի ի վնգուկիս և վասն գնալոյ լուսաւորելոյն և դամեկաղով վանքն նոցա շինելոյն» յաւնում սրբոյ առաքելոյն Թովմասի», գ. «Վասն գնալոյն սրբոյն Բարդղղոմէոսի առաքելոյն ի վախելոյ քաղաքն Վանանդ և անտի յերեւանդ և ի Մարս» (էջ 55—64):

2) Հետաքրքրական է նաև, որ ըստ ավանդության Թովմաս առաքելի նույն աջ ձեռքի ճկույթ մասը գտնվում էր Խարբըրդի Եռեջ կամ Դուկի Ս. Դեռոգ կոչված վանքում, զեռ XIII դարում. տես Զ. Զ. Տաշյան, «Յուրաք հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի վիճակ» (Վիճակ, 1895), էջ 1040:

«Ձգիւանդըս նոցին բըժըշէր.
 Եւ ըզկոյրսըն լուսաւորէր.
 Ըզբորոտըս նոցա սըրբէր.
 Եւ ըզմեռեալսն յարուցանէր» (էջ 18—19):

Դրանից հետո ևս նա լրացուցիչ ծախս է պահանջում թագաւորից, այդ ևս նույնպէս հատկացնում նույն նպատակին.



«Ձայն ևս Թովմաս առատ ցըրէր.
 Չորրս և զայրիս մըխիթարէր» (էջ 19):

4+4+3 / 4+4+3 / 4+4+3 / 4+4+3

Այս տաղի առաջին տողերն են՝
 «Թովմաս ընտրեալդ ի Յիսուսէ դէս
 շընդկաց.

Սուրբ առաքեալդ օգնական րոց վիճակաց»:
 Ընդամենը 8 տուն է, որոնց սկզբնատառերը կազմում են՝ «Թովմասի է»։ Իսկ վերջին տողներն են՝

«Աղերսելով ողբամ առ ըզդ գուճ անկեալ.
 ՉԹովմաս ծառայդ հասո՛ կամացդ
 վիճակեալ»:



Մի էջ Թովմաս Ազուլեցու հնատիպ գրքից:

Այսքանը բավական ենք համարում Թովմաս Ազուլեցու «Պատմութիւն Թովմասի առաքելոյն» աշխատութեան մասին:

Թովմաս Ազուլեցին, ինչպէս հիշատակեցինք, այս հատորում ունի և մի տաղ, «Տաղ Գովասանութեան սրբոյն Թովմասի առաքելոյն, ասացեալ ի նոյն իրիցէ» վերտառութեամբ, որ ղետեղված է վերոհիշատակյալ անծանոթ հեղինակի կողմից գրված՝ Բարթողիմեոսի պատմութիւնից հետո (էջ 64—66): Չափն է՝

Մեր տպագիր հատորի վերջում, ինչպէս ասել ենք, գրված են նաև Թովմաս և Թադեոս առաքեալներին նվիրված շարականներ, որոնք սակայն հայոց կանոնական «Շարականաց» ներում չկան, որովհետև նրանք պատկանում են Հայկական Սկեղեցու անվավեր կամ պարականոն կոչված շարականների շարքին, այսինքն՝ այն շարականների, որոնք պարտավորիչ ձևով ընդհանուր գործածութեան չեն հանձնարարվում: Թովմասի և Թադեոսի այս կանոնները, որոնց հեղինակներն անհայտ են,

որիչ անվավերների հետ հրատարակված են ամբողջությամբ¹⁾։ Նրանք գործածության մեջ են եղել XII և XIII դարերում, հետո դուրս են ընկել գործածությունից։

Այստեղ մենք անհրաժեշտ ենք համարում նորից վերադառնալ հիշատակարանի բովանդակությանը, որովհետև այնտեղ կարեւոր տեղեկություններ կան գրքի հրատարակման հանգամանքների մասին։ Նախ թվականների մասին։ Հիշատակարանում ասվում է, թե գրքիս էր սոցա օրինակն ի 871 թվին հայոց, որ է (871+551=) 1422 թիվը։ Բայց դա, հայտնապես, սխալ է։ Թովմաս Ագուլեցին որոշապես խոսել է հրատարակության հանգամանքների մասին։ Նախ թվականը, որ էր 1705 թիվը։ Եթե տպագրիչը «սոցա օրինակն» ասելով հասկանում է ոչ միայն Ագուլեցու խոշոր պոեման, այլև գրքում տեղավորված մյուս նյութերը, ամբալայդ բոլորը կարող էին մի ձեռագիր տետրի մեջ ամփոփված լինել 1705 թվից հետո, բայց ոչ առաջ, հետևաբար, «871» հայոց թվականը պետք է համարել տպագրական վրիպակ։ Հիշատակարանը տալիս է և գրքի տպագրման տարեթիվը, որ է հայոց 1183 թիվը, այսինքն՝ (1183+551=) 1734 թ.։

Հիշատակարանում ուշադրության արժանի է Միքայել վարդապետի անվան հիշատակությունը՝ «Յիշեցէք զՄիքայել վարդապետն՝ որ եղև առիթ տպման սորա»։ Ահա մի անուն, որ կապված է Թովմաս Ագուլեցու երկի տպագրման հետ։ Մենք տեսանք արդեն, որ այս անունը կապված էր նաև այդ երկի ստեղծման հետ։ Մա այն նույն Միքայել վարդապետն է, որ պատճառ էր հանդիսացել հեղինակին՝ այս երկը հորինելու։ Արժե, ներկա առիթով, պարզել նրա անձնավորությունը, որովհետև նա ժամանակի աչքի ընկնող մտավորական դեմքերից է եղել և որոշ դեր է կատարել ազգային-մշակութային կյանքում։

Թովմաս Ագուլեցին Միքայել վարդապետի մասին մեծ գովասանքով է խոսում իր պոեմայի հիշատակարանում. Միքայելը Ագուլիսի վանքի «ընտրեալ» միաբաններից էր, հրմուտ էր հայոց գրականության գանձերին, ուստի և գրագրերից ծանոթ լինելով Թովմաս առաքյալի գործերին, Ագուլեցուն հանձնարարել էր այդ նյութի վրա բանաստեղծություն գրել, ինչպես ասում է նա.

«Հմուտ գլուով այս սուրբ ճառից.

Հարկ եղ փերայս այս պատճառից.
Ոտանաւոր շինել ասաց.

Ուժեղ սիրով միշտ պահանջեաց»²⁾։

Թովմաս Ագուլեցին ասում է, թե 1705 թվին, ճիշտ այն օրերին, երբ վերջացնում էր իր պոեման, Միքայել վարդապետը Ագուլիսի վանքի համար նվիրակությամբ մեկնում էր Արևմտյան Հայաստան, այսինքն հայոց այն գավառները, որոնք գտնվում էին օսմանցիների տիրապետության տակ, և, իհարկե մինչև 4. Պոլիս.

«Յաւուրս է գնալ Յունաց երկրին.

Սա ժողովել դանձանակ վանքին»³⁾։

Եվ, իրոք, նա անցել էր «Յունաց երկիր»-ը (Թուրքիա), ինչպես հաստատում են ուրիշ հիշատակարաններ, և 4. Պոլսում էր գտնվում մինչև 40-ական թվականները, թեև հայտնի չէ, 1705 թվից հետո նա երբևիցե Ագուլիս վերադարձել էր, թե ոչ։ 4. Պոլսում նա բավականին գործուն մասնակցություն է ցուցնել ժամանակի տպագրական շարժման մեջ։ Այսպես՝ 1730 թ. Գրիգոր Մարգվանցու տպարանից լույս տեսած «Յայսմատուրք»-ի ցանկերը նա է կազմել և այդ առթիվ գրել է իր սեփական հիշատակարանը.

«Յուսովն աստուծոյ. և սիրով սրբոց նորա. ես նախ ոգի Միքայել վարդապետս Արևելցի. ի դառառն Գողթնեաց. և ի գերագով վանից սրբոյն Թովմայի Առաքելոյն՝ որ յԱգուլիս։ Աշխատեցայ ի վերայ յայսմատուրքիս. և հաւաքեցի զանուանս սրբոցն աստուծոյ՝ ըստ այլութեանից դասաւորովեանց։ Եւ եղի ընդ նմին զամիսան և զթղթահամարսն, վասն դիրեաւ գտանելոյ զճառս Տէրունականս և զպատմութիւնս սրբոցն։ Իսկ յիւրեան անկեալ աղաչեմ՝ զսոնողսդ՝ և զհամընդուսդ սրբոցն՝ զի յիշեսցի ի սրբամաքուր աղօթն ձեր առ տէր, զյոզնամեղս՝ և համայն ազգայինքն իմ։ Եւ դուք՝ յիշեալ լիշիք ի խնամս Քրիստոսի յաստ՝ և ի հանդերձեալն՝ ամէն»⁴⁾։

Միքայել վարդապետը, որ, ինչպես ինքն է ասում, գողթնեցի է և իրեն Արևելցի է անվանում, պատճառ է եղել Ղազար Զահկեցու «Թրախտ ցանկալի» կոչված գրքի շարադրման, ինչպես և տպագրմանը 1734 թ. Մատենի Աստվածատրի տպարանում, ճիշտ այնպես, ինչպես եղել է Թովմաս Ագուլեցու երկի համար։ Ահա այդ մասին տպագրողի հիշատակարանի տողերը.

1) Տեսակ վրդ. Ամատունի, «Հին և նոր պարականոն կամ անվանք շարականներ» (Վաղարշապատ, 1911), էջ 39—41՝ «Կանոն սրբոյն Թովմայի առաքելոյ», էջ 33—36՝ «Կանոն Թադէոսի առաքելոյն»։

1) Տես հոգևածիս առաջին մասը, «Էջմիածին», 1949 թ. Մարտ—Ապրիլ, էջ 43։

2) Անդ, էջ 43։

3) «Գիրք որ կոչի Այսմատուրք», 4. Պոլիս, 1730 թ.։

«Արդ՝ յիշեալիք զտէր Միքայէլ հոգեւոր վարդապետն միաբան սրբոյն Թօմայի առաքելոյն. որ կարի յորդորմամբն արարեցման և տպեցման գրքոյս եղև պատճառ. որոյ տէր տացէ նմա զվարժս բարիս»¹⁾։

Միքայել վարդապետը օժանդակել է նաև Գրիգոր Տաթևացու «Ամատան» հատորի հրատարակմանը 1741 թվին, Աբրահամ դպիր Թրակացու տպարանից։ Այս մասին տպագրիչը գրում է հիշատակարանում։

«Այլ և յիշեցէք զՄիքայէլ վարդապետն Ագուլեաց վանիցն որ այժմ տեղապահ է սրբազան վեհին. որ եւոք օրինակ մի տպելոյ»²⁾։

Այս տողերում հիշատակված «սրբազան վեհ»-ը, հիշատակարանի նախորդ մասերի համաձայն, գողթնացի Հովհաննես վարդապետն է. Ագուլիսի վանքի առաջնորդը, որ 1733 թ. 4. Պոլիս էր եկել տրպես էջմիածնի կաթողիկոսական նվիրակ. ըստ երևույթին Միքայելը նրա տեղապահն էր կարգվել 4. Պոլսում այդ ժամանակվանից. ուրիշ խոսքով, նա կաթողիկոսական մնայուն ներկայացուցիչն էր օսմանյան մայրաքաղաքում։

Միքայել Արևելցին, ուրեմն 4. Պոլսում հայտնի դեմք էր, մտավորական և հասարակական գործիչ. նա Թովմաս Ագուլեցու աշխատության ձեռագիրը 1734 թվին տպագրության էր հանձնել «արդեամբ Զաքարիայի որդի Տիրացու Յոհաննէսին և Մահտեսի Մատուրի տղայի Ազարիային»³⁾, որոնք հավանորեն ագուլեցի վաճառականներ էին։ Այսպիսով, նրա անունն անբաժանելի է Թովմաս Ագուլեցու անունից։

Դառով գրքի տպագրության վայրի և տպարանի հարցին, սպասելի էր, որ մեր որոնումներն սկսելով 4. Պոլսից, որտեղ, ինչպես տեսանք, գործել էր մեր գրքի հրատարակիչ Միքայել Արևելցին, այնտեղ գտնեինք այդ հարցի լուծումը։ Իրոք մեր պրպտումները մի անձանոթ էջ բաց արեցին այդ կողմից։

Այդ թվականներին 4. Պոլսում գործող հայտնի տպարանները եղել են Գրիգոր Մարզվանցու, Աստվածատուր Ապուլեխցու, Սարգսի որդի Մարտիրոս դպրի, Բարսեղու Հակոբ Սեբաստացի եղբայրների և Աբրահամ դպիր Թրակացու տպարանները։

Արդ, համեմատելով Թովմաս Ագուլեցու տպագրի արտաքին հանգամանքները տպա-

գրական արվեստի տեսակետից վերահիշյալ տպարանների մի շարք հրատարակությունների հետ, մենք կարողացանք հաստատել, որ նա իրոք տպագրվել է 4. Պոլսում, և ճշրտել նրա տպարանը։ Համեմատություններից երևաց, որ տպարաններից ամեն մեկն էլ ունի թե՛ զարդանշերի, թե՛ զարդագրերի և թե՛ տառերի զանազան տեսակներ, որոնք նաև իրարու միջև հաճախ մեծ նմանություններ էլ ունեն. բայց և այնպես՝ այդ բոլոր այլազանությունների մեջ կարելի է լինում հստակորեն որոշել մեր հատորիկի դիրքը։

Մեր հատորիկի էջերը շրջանակող նույն զարդանշերը մենք գտանք Գեորգ Մխլեյիմի «Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկաբնակաց» կոչված գրքում, որ տպագրված է 1734 թ. Մարտիրոս դպրի տպարանում։

Այս զարդանշերի հետ իհարկե շպնտք է շփոթել նրա տարբերակները։ Սրանց նման են և Աստվածատուր Ապուլեխցու մի շարք հրատարակություններում գործածված զարդանշերը, ինչպես օր., Սիմեոն Զուլայեցու 1728 թ. տպագրված «Գիրք տրամաբանութեան» հատորում, բայց նույնը չեն նրանք. նույն օրինակի վրա են պատրաստված, բայց այլ կաղապարից են դուրս եկած, և ուշադիր զննությունը ցույց է տալիս, որ թեև շատ չնչին, բայց և այնուամենայնիվ կա՝ տարբերություն¹⁾։ Այսպես և 1734 թ. Աբրահամ Թրակացու տպագրած «Թամագիրք ատենի»-ի զարդանշերը, որոնք նմանապես նույն օրինակի վրա են պատրաստված, բայց ուրիշ կաղապարից են և մի շնչին երանգով են միայն զանազանվում վերահիշյալ տարբերակներից և կազմում են 3-րդ տարբերակը։ Նույն զարդանշի մի 4-րդ տարբերակ գտնում ենք 1752 թ. 4. Պոլսում Տեր Հովհաննեսի տպագրած «Թուղթ երանելոյն Պօղոսի հարձնացոյ յաղթող Խաչոյեան վարդապետի ընդդէմ Թեոփիստեայ հոռոմ փիլիսոփային» գրքում²⁾։ Աբրահամ Թրակացու տպարանը ունի նաև այս զարդանշի մի տարբեր տեսակը, երկու զանազան չափերով, — փոքր և մեծ, — որոնք կազմում են 5-րդ և 6-րդ տարբերակները։ Այս նոր տեսակը նախորդների շուտ տված երեսն է ներկայացնում, այսինքն աջից ձախ շրջված, ինչպես կատացվի նույն

1) «Գիրք աստվածաբանական ար կոչի դրախտ ցանկալի, շարադրեալ ի Ղազարու աստվածաբան վարդապետէ ձահկեւոյ», 4. Պոլիս, 1734 թ.։

2) «Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր, արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացոյն եօթնաւոյ վարդապետի», 4. Պոլիս, 1741 թ.։

3) Տես «էջմածին», 1949 թ. Մարտ—Ապրիլ, էջ 42։

1) Տեսնել և Աստվածատուր հրատարակութեան լիցի՝ «Գիրք սահմանաց Դավի անյաղթ փիլիսոփայի և աստվածաբան վարդապետի», 1731 թ.—«Մեկնութիւն սրբոյ Աւետարանին որ ըստ Ղովկասու, արարեալ սրբոյ վարդապետին Իգնատիոսի», 1735 թ. և այլն։

2) Մահտեսի Ղազարի որդի Տեր Հովհաննէս բահանաի անուամբ անձանոթ է դեռ. Պոլսահայ տպագրության պատմության մեջ։

զարդանիշը հայելու միջից դիտելով. տե՛ս՝ 1730 թ. տպված «Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկայ հոգեկիր հոնտորի» աշխատությունը, որի անվանաթերթի շրջանակում շարված են այս երկու տեսակներն էլ. տես և նույն տպարանում հրատարակված անթվական «Գիրք որ կոչի Տաղարան»-ը¹⁾։ Այս զարդանշի մեծ տեսակից ունի և Չնչին Ովանեսի տպարանը, տե՛ս «Գիրք պատասխանական սրբոյն Աթանասիոսի՝ հարցմանցն սրբոյն Կիրղի Երուսաղէմացւոյ», անթվական։

Ի մի ամփոփելով բոլորը, պետք է ասել, որ այս 6 տարբերակները միեւնույն զարդամոտիվն են ներկայացնում, տարբերվելով միայն հետին նրբությունների մեջ և կասկած չկա, որ նրանք բոլորը միեւնույն փորագրչի ձեռքից են, տարբեր նվագներով դուրս եկած. իսկ դրանցից միմիայն Մարտիրոս դպրի զարդանշերն են, որ կատարելագույնն են մեր հատորիկի զարդանշերի հետ։

Մարտիրոս դպրի հրատարակած միեւնույն գրքում, որ է Գեորգ Մխլեյիմի «Գիրք վիճարանութեան»-ը, մենք գտնում ենք նաև մեր հատորիկում գործածված նույն զարդագրերը։ Իսկ Աբրահամ Թրակացու այն զարդագրերը, որոնք գործածված են 1734 թվին տպված «Ժամագիրք ատենի»-ում, թեև շատ նման են՝ կառուցված լինելով նույն զարդամոտիվների վրա և, անկասկած, միեւնույն փորագրչի գործ են, բայց նույնը չեն։ Իսկ ուրիշ հրատարակությունների մեջ մեզ չի հաջողվել գտնել այդ զարդագրերի նույն կամ նման օրինակը։

Գալով տառերին, մեր հատորիկում գործածված տառերը երկու տեսակ են. բոլորագիր՝ որով շարված է լայն տեքստը, և նոտր գիր՝ որով շարված են գլուխների վերնագրերը։ Այս տառերին հաճախ ենք հանդիպում զանազան հրատարակությունների մեջ, բայց այդ երկու տեսակները միասին և նույն ձևով գործածված, — առաջինով տեքստը շարված, իսկ երկրորդով՝ վերնագրերը, — մենք գտնում ենք միայն Գեորգ Մխլեյիմի հիշյալ «Գիրք վիճարանութեան» հատորում, մի հանգամանք, որ մյուս հանգամանքների հետ միացած, նշանակություն է ստանում։ Ուստի այստեղ ևս Մարտիրոս դպրի տպագրած այդ գիրքը համանման է մեր հատորիկին։

Արդ, մեր հատորիկի ժամանակաշրջանում և. Պոլսում հրատարակված բազմաթիվ գրքերի համեմատությունից պարզվում է, որ միեւնույն զարդանշերը, զարդագրերը և համադրաբար նաև տառերը գտնվում են միայն ու միայն Գեորգ Մխլեյիմի «Գիրք վիճարանութեան» գրքում, որի տպագրիչը Մարտիրոս դպիրն է. ուստի կարող ենք հաստատագրել, որ նրանք միեւնույն տպարանի արտադրություններ են։ Պետք է նկատել նաև, որ երկուսն էլ տպագրված են 1734 թվին։

Կարևոր կռվան է նաև նույն թվին տպագրված երկու գրքերի հիշատակարաններում հիշվող տպարանի աշխատավորների անունների նույնությունը։ Թուփմաս Ագուլեցու գրքի վերջում հրատարակիչը խնդրում է հիշել «և զաշխատաւորս գործոյս զեաշէրն և զԱնտօնն»։ Իսկ Գեորգ Մխլեյիմի գրքի վերջում նույնպես հիշված են նույն աշխատավորները. «Յիշեցէք և զաւարագծօղ և զաւարագծօղ կապարեղինաց գորց՝ զՀլու և զհայատակն իմ մի՛շտ զՏիրացու Անտօնն... Յիշեցէք և զսիրելին իմ զՏիրացու Խաչերն. որ նա ևս մերթ ի դիպօղ ժամու անյապա՛ղ գայ և հասանի ի դործ ինչ պիտոյիցս»։ Ծիշտ է, թե Խաչերն ու Անտոնը միաժամանակ հաճախ երևում են և ուրիշ տպարաններում, բայց 30-ական թրվականներին նրանք Մարտիրոս դպրի տպարանի հիմնական աշխատողներն են եղել։ Դեռևս 1730 թ. իր տպագրած «Ժողովածու»-ի վերջում Մարտիրոսը գրում է. «Դարձեալ յիշել աղաչեմ և զքաջամարտիկ և զքրտնաջան աշխատաւոր մշակս գործարանին իմոյ զընթերցասէր և զքրտնաթափ վաստակաւորն իմ զԽաչերն... Նա և զաւարաբարգօղ և զցրօղ գրոյս կապարեայ զտիրացու Ստեփաննոսն և զտիրացու Անտօնն. որք զեգերին յարածամընդործանութիւնս սորա»։ Նրանք հիշված են և նույն տպարանի հետագա հրատարակություններից շատերում։

Մի խոսքով տշ մի կասկած, որ Թուփմաս Ագուլեցու «Պատմութիւն Թովմայի առաքելոյն» աշխատությունը լույս է տեսել և. Պոլսում, Մարտիրոս դպրի տպարանից։ Մարտիրոս դպիրը որդին էր XVIII դարի սկզբին և. Պոլսում տպարանատեր և տպագրիչ Մարգիս դպրի։ Նա սկզբում աշխատել է իր եղբոր՝ Գեորգի հետ իր հոր տպարանում, հետո՝ 1721 թվից սկսած, ինքնագլուխ վարել

1) Այս գրքից նրեանում կա միայն մի օրինակ, Պետ.Պատմական Թանգարան, Հն. № 237, որի դժբախտաբար անվանաթերթը պակասում է։ Մենք վերնագրերը կազմել ենք ըստ հիշատակարանի։

տպարանը մինչև 1752 թվականը, հրատարակելով մի շարք գրքեր¹⁾։ Համեմատության համար մենք ձեռքի տակ ունեցել ենք նրա մամուլից դուրս եկած 12 անուն գիրք, որոնցից միայն մի հատն է, որ բոլոր հանգամանքներով կատարելապես նույն է թուրքական Ազուլեցու երկի տպագրի հետ։ Մարտիրոսի տպագրած ծանոթ գրքերից 4-ը մենք չենք տեսել. կարող է պատահել, որ նրանց մեջ ևս գտնվեն նմաններ²⁾։

Այսպիսով, Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 8279 գրադրի կազմով պահված հնատիպ հրատարակությունը կարևոր արժեք է ներկայացնում հայկական

գրականության և տպագրության պատմության համար։ Այս նորագյուտ մատենիկից հրկում է, որ Նախիջևանի մի համեստ անկյունում³⁾ Գողթն գավառի Ազուլիս գյուղում XVII դարի վերջերում և XVIII դարի սկզբներում ապրում էր և ստեղծագործում բանաստեղծ Թովմաս Ազուլեցին, որի անունը մեզ անծանոթ էր մնացել մինչև այժմ։ Մյուս կողմից, այս հնատիպ աշխատության հայտնաբերումով մի գիրք ևս ավելանում է պուսահայ վաստակավոր տպագրիչներից Մարտիրոս դարի լույս ընծայած գրքերի ցանկի մեջ։

1) Թեոդիկ, «Տիպ ու տառ» (Կ. Պոլիս, 1912), էջ 58—59, Գարեգին Լևոնյան, «Հայ գիրքը և տպագրության արվեստը» (Երևան, 1946), էջ 142—144։

2) Ուրիշ հետազոտողների գյուղության համար նշենք, որ մեր քննածները հետևյալներն են. 1. «Համառոտ գիրք աղօթից, արարեալ յառաջին ուղղափառ վարդապետաց», 1721 թ.։ 2. «Գիրք և ճառ հոգեշահ, արարեալ յուղղափառ և յաստուածարան վարդապետաց եկեղեցւոյ», 1722 թ.։ 3. «Գիրք որ կոչի Քերականութիւն, արարեալ և շարադրեցեալ ի Սիմէօնէ վարդապետէ Զուլայեցւոյ», 1725 թ.։ 4. «Կոչումն ընծայութեան... արարեալ սրբոյն Կիրղի Նրոսաղէմայ հայրապետին», որի հետ և «Գրիգոր վարդապետի Արղաթունեաց եպիսկոպոսի արարեալ Մեկնութիւն ընթերցողածոցն Կիրղի Նրոսաղէմացւոյ», 1727 թ.։ 5. «Բուզանդարան պատմութիւն, շարադրեալ Բուզանդայ մեծի պատմագրի», 1730 թ.։ 6 «Սկիզբն դրոցս որ կոչի ժողովածուն», 1730 թ.։

7. «Ըաշոց գիրք փորագոմեղ», 1732 թ.։ 8. «Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեայց եկեղեցւոյ», 1733 թ.։ 9. «Գիրք վիճարանութեան ընդդէմ երկաթնակաց, շարադրեցեալ Գէորգ վարդապետի Կոստանդնուպօլսեցւոյ Միլէթի օղլու կոչեցւոյ», 1734 թ.։ 10. «Գիրք աղօթից, ասացեալ յառաջին ուղղափառ և յաստուածարան վարդապետաց», 1747 թ.։ 11. «Խորհրդատետր Սրբազան պատարագի, ըստ արարողութեան եկեղեցեացն Հայաստանեայց», 1748 թ.։ 12. «Տաղարան վալիուլ և գեղեցիկ, ի զանազան բանաստեղծից շարադրեցեալ», 1752 թ.։

Իսկ մեր շտեմաններն են՝ 1. «Հանելուկք կամ Առեղծոսածք սրբոյն Ներսիսի Շնորհալոյ», 1724 թ.։ 2. «Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեայց եկեղեցւոյ», 1729 թ.։ 3. «Գիրք աղօթից, ասացեալ սրբոյն Նիքիմի Խուրին Ասորւոյ», 1734 թ.։ 4. «Փոքրիկ գանձարան, հաւաքեցեալ համառոտաբար ըստ պատշաճի ասուր մեծ տօնից տէրունականաց և ամենայն սրբոց», 1739 թ.։

